

ԳԻՏԱԺՈՂՈՎ ԿԻԵՎՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌՈՒՍԻԱՅԻ ՄԿՐՏՈՒԹՅԱՆ 1000-ԱՄՅԱԿԻՆ

1986 թ. հուլիսի 21-ից 28-ը Կիևում, Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Նորին Սրբություն Պիմենի օրհնությամբ, կայացավ միջազգային եկեղեցական գիտաժողով՝ նվիրված Ռուսիայի Մկրտության 1000-ամյա հոբելյանին:

Գիտաժողովին մասնակցում էին եկեղեցական պատմաբաններ 34 եկեղեցիներից ու եկեղեցական կազմակերպություններից, ինչպես նաև 16 աստվածաբանական դպրոցներից: Գիտաժողովին մասնակցելու անձնական իրավեր էին ստացել նաև մի շարք անվանի գիտնականներ: Մասնակիցներից բացի գիտաժողովին ներկա էին մի շարք հյուրեր:

Հայ Եկեղեցու կողմից գիտաժողովին մասնակցեց և զեկուցմամբ հանդես եկավ Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանի քարտուղար և դասախոս Հուսիկ քահանա Լազարյանը:

Գիտաժողովի աշխատանքները ղեկավարում էր Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ, Ուկրաինայի Պատրիարքական Էկզարխ Ֆիլարետը:

Հուլիսի 21-ին՝ գիտաժողովի բացման օրը, Ռուս Պրավոսլավ Եկեղեցին տոնում էր Կապանի Աստվածածնի սրբապատկերի տոնը: Մասնակիցները և հյուրերը մասնակցեցին այդ առիթով Կիևի Վլադիմիրյան տաճարում մատուցված ս. պատարագին:

Նույն օրը, գիտաժողովի բացումից անմիջապես առաջ, մասնակիցները և հյուրերը համատեղ աղոթեցին Վլադիմիրյան տաճարում:

Գիտաժողովը զեկուցումով բացեց Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը, որից հետո Մոսկվայի Պատրիարքարանի արտաքին եկեղեցական հարաբերությունների բաժնի վարիչ, Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը հրապարակեց Մոսկվայի և Համայն Ռուսիայի Պատրիարք Պիմենի ուղերձը գիտաժողովի մասնակիցներին, ուր Նորին Սրբությունը սրտանց շնորհակալություն էր հայտնում գիտաժողովի մասնակիցներին՝ Ռուսիայի քրիստոնեացման ընթացքի ուսումնասիրությանը գործուն մասնակցություն ցուցաբերելու ձգտման համար: Նորին Սրբությունը հայտնում էր իր վստահությունը, որ մոտակա հոբելյանը կդառնա տոն բոլոր Ուղղափառ և մյուս այն Եկեղեցիների համար, որոնց հետ Ռուս Պրավոսլավ Եկեղեցին կապված է եղբայրական համագործակցությամբ՝ ի փառս Քրիստոսի:

Այնուհետև հրապարակվեցին գիտաժողովին ուղղված ողջույնի խոսքերը, որոնք ստացվել էին Երուսաղեմի և Համայն Պաղեստինի Պատրիարք Դիոդորոսից, Կիպրոսի Արքեպիսկոպոս Խրիսոստոմոսից, Հընդկաստանի Սիրիական Ուղղափառ Եկեղեցու կաթողիկոս Բասիլիոս Մար Թոմա Մատթեոս Ա-ից, Քենթրբերիի Արքեպիսկոպոս դոկտոր Ռոբերտ Ռընսիից, ԵՀԽ-ի գլխավոր քարտուղար դոկտոր Էմիլիո Կաստրոյից:

Յուրաքանչյուր աշխատանքային օր սկըսվում էր համատեղ աղոթքով:

Միջազգային գիտաժողովի նպատակն էր՝ պատմական փաստերի հիման վրա լուսաբանել Ռուս Պրավոսլավ Եկեղեցու 1000-ամյա գոյության հիմնական երեսները: Քննարկվող զեկուցումները հիմնականում բաժանված էին 4 խմբի.

ա. Քրիստոնեությունը Ռուսիայում մինչև Մեծ Իշխան Ս. Վլադիմիրը:

բ. Ռուսիայի Մկրտությունը Իշխան Ս. Վլադիմիրի օրոք և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու նախնական շրջանի պատմությունը:

գ. Ռուս Պրավոսլավ Եկեղեցու միսիոներական գործունեությունը երկրի ներսում և նրա սահմաններից դուրս:

դ. Ռուս Պրավոսլավ Եկեղեցու ներդրումը խաղաղության, ապատության, եղբայրության, սիրո և համագործակցության գաղափարների ամրապնդման գործում՝ սկսած Ս. Վլադիմիրից մինչև մեր օրերը:

Այս հարցերը արծարծվեցին ներկայացված 40 վեկուցումներում, որոնց շուրջ տեղի ունեցան բանավեճեր:

Զեկուցումներում և նրանց հաջորդած բանավեճերի ընթացքում մասնակիցները քննարկեցին բազմաթիվ հարցեր: Վերանայման ենթարկվեց Ս. Անդրեաս առաքյալի գործունեությունը Կիևյան հողերում և նշվեց այն դրական ազդեցությունը, որ այդ ավանդությունը թողել է Ռուս Եկեղեցու ինքնագիտակցության կազմավորման վրա: Ընդգծվեց հատկապես Ս. Կիրիլի և Ս. Մեֆոդիի աշխատությունների, հատկապես Աստվածաշնչի թարգմանության հսկայական նշանակությունը ռուսական հողում քրիստոնեության տարածման գործում: Նշվեց նաև Սև ծովի առափնյա շրջանների հունական բնակավայրերից, ինչպես նաև Հայաստանից (տե՛ս Հուսիկ քհն. Լազարյանի վեկուցումը, էջ 38) և Վրաստանից եկած քրիստոնեական ազդեցությունը: Նշելով Բյուզանդիայի և Բուլղարիայի ազդեցությունը՝ մասնակիցները հիմնովին քննադատեցին Ռուսիայի քրիստոնեացման գործում Արևմտյան Եկեղեցիների մասնակցության տեսությունը:

Մեծ ուշադրություն դարձվեց «Ռուս» հասկացության վրա, հատկապես ժամանակակից գիտության լույսի տակ: Այս առնչությամբ մանրամասն քննարկվեցին Ռուսիայի Մկրտության և Ռուս Պրավոսլավ Եկեղեցու կազմավորման հետ կապված հարցերը:

Գիտաժողովում ուշադրություն դարձվեց այն դերի վրա, որ ունեցել է Ռուս Եկեղեցին ռուս ժողովրդի բարոյական գաղափարների ամրապնդման և հարստացման գործում:

Մանրամասն քննարկման ենթարկվեցին Ռուս Պրավոսլավ Եկեղեցու և Կաթոլիկ Եկեղեցու միջև եղած հարաբերությունները՝ հատկապես 1054 թ. բաժանումից հետո: Նշվեցին այն դժվարությունները, որոնց հանդիպել է Ռուսական Եկեղեցին դարերի ընթացքում Լատինական Արևմուտքի հետ ունեցած շփումների ժամանակ, հատկապես ընդգծվեց Կաթոլիկ Եկեղեցուց եկող միարարական ձգտումը: Եզրակացվեց, որ միջեկեղեցական հարաբերություններում թույլ տրված սխալները չպետք է կրկնվեն այսօր:

Ներկայացված վեկուցումներում մանրամասն վերլուծման էին ենթարկվել մի շարք հին եկեղեցական ռուսական գրական հուշարձաններ, ինչպես նաև Ռուս Պրավոսլավ Եկեղեցու միսիոներական գործունեությունը:

Մի շարք վեկուցումներ նվիրված էին Ռուս Եկեղեցու խաղաղասիրական գործունեությանը. մասնավորապես քննարկվեց արդի իրավիճակը և Ռուս Եկեղեցու գործունեությունը միջուկային աղետի կանխման ուղղությամբ:

Հուլիսի 25-ին գիտաժողովի մասնակիցների մի խումբ եղավ Խաղաղության պաշտպանության Ուկրաինական հանրապետական կոմիտեում:

Հուլիսի 27-ին մասնակիցները և հյուրերը ներկա եղան Պոկրովյան և Ֆլորովյան վանքերում մատուցված ս. պատարագին, որից հետո այցելեցին Կիևի տեսարժան վայրերը: Երեկոյան մասնակցեցին ժամերգության Վլադիմիրյան տաճարում:

Հուլիսի 28-ին, Ս. Վլադիմիրի տոնին, Ռուս Եկեղեցու բարձրաստիճան հոգևորականները Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետի գլխավորությամբ ս. պատարագ մատուցեցին Վլադիմիրյան Մայր տաճարում, որին ներկա գտնվեցին նաև գիտաժողովի մասնակիցները և հյուրերը:

Նույն օրը Կիևի և Գալիցիայի միտրոպոլիտ Ֆիլարետը կազմակերպեց պաշտոնական ընդունելություն:

ՀՈՒՍԻԿ ՔՀՆ. ԼԱԶԱՐՅԱՆ